

Հ Ր Ա Վ Ե Ր

ԲԱՑ ՄՐՑՈՒՑԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

22 փետրվարի, 2018թ.

«ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեում, հատակի վինիլային ծածկույթի գնման նպատակով կազմակերպում է բաց մրցույթ:

Ծառայությունների գնումը ֆինանսավորվելու է «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին ՄԱԿ ՓԳՀ-ից դրամաշնորհի ձևով հատկացված միջոցների հաշվին:

Բաց մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ-ում գործունեություն ծավալող անձինք՝ անկախ նրանց իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մրցույթի առարկա է հանդիսանում հատակի վինիլային ծածկույթը 115մ² ընդհանուր ծավալով, գույնը՝ մոխրագույն (տե՛ս տեխնիկական առաջադրանք և գնային առաջարկ փաստաթուղթը)

Ծառայությունների մատուցման ժամկետը հաղթող մասնակցի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո մինչև 2018թ. մարտի 31-ն ընկած ժամանակահատվածն է:

Ուշադրություն՝ «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ կատարված ցանկացած ծառայության կամ ապրանքի գնման նկատմամբ պետք է կիրառվի ԱԱՀ-ի գրոյական դրույք: Առկա է որոշումը:

Նույն մասնակցի կողմից մի քանի գնային առաջարկ ներկայացնել չի թույլատրվում:

Մրցույթի հաղթողը կորոշվի հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով (սեղմելով մուտքի դռան 5B կոճակը), մինչև 2018թ. մարտի 1-ի ժամը 17⁰⁰-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Ուշադրություն՝ հիմնադրամի ոչ աշխատանքային օրերն են համարվում յուրաքանչյուր կիրակի և երկուշաբթի օրերը:

«Տեխնիկական առաջադրանք և գնային առաջարկ» փաստաթուղթը դրվում է ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից:

Ծրարը և դրանում ներառված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

Ծրարի վրա նշվում են՝

- ա) մրցույթի կազմակերպիչի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).
- բ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:
- գ) մասնակցի կոնտակտային անձի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

Հայտերի բացման նիստում հանձնաժողովը գնահատում է՝

ա) հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ) բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթի(երի) առկայությունը.

գ) յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պայմաններին:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ որակյալ ապրանքի գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտարարում է մրցույթում հաղթած մասնակցին այդ մասին էլեկտրոնային նամակով կամ հեռախոսով տեղեկացնելու միջոցով:

Հիմնադրամի տնօրեն



Տ. Բաղդասարյան